

«Ուռուցքաբանական հիվանդությունների բուժում» ապահովագրական ծրագրի համառոտ տեղեկատվական թերթիկ

Ուռուցքաբանական հիվանդությունների բուժում» ծրագիրը ուռուցքաբանական հիվանդությունների առկայության կասկածների ի հայտ գալու և/կամ ախտորոշվելու դեպքում թույլ է տալիս օգտվել հետևյալ ծառայություններից՝

Ամբողջական բժշկական ուղեկցում և բուժում՝

- Բժիշկ-ուռուցքբանների խորհրդատվություն,
- Ժամանակակից բուժում,
- Արդյունավետ դեղորայքային միջոցներ,
- Հոգեբանական աջակցում

Բժշկական և այլ ծառայություններ՝

- **Ախտորոշման կրկնակի ստուգում (նախկինում տրված ախտորոշման կրկնակի ստուգում)** - ներառում է կենսանյութի լաբարատոր ուսումնասիրություն, բժշկական փաստաթղթերի վերստուգում: Դրանց հիման վրա առաջատար բժիշկ-ուռուցքբանի կողմից տրամադրվում է եզրակացություն և բուժման պլան:
- **Բժշկական ծառայություններ** համաձայնեցված պլանի հիման վրա
 1. Բուժող բժշկի և տվյալ հիվանդաբանության առաջատար բժիշկ-ուռուցքբանի հետ խորհրդատվություններ,
 2. Վիրահատական և պահպանողական բուժում, այդ թվում քիմիաթերապիա և ճառագայթային թերապիա.
 3. Դեղորայքային և այլ բժշկական միջոցներ, որոնք անհրաժեշտ են ստացիոնար և ամբուլատոր պայմաններում բուժման համար,
 4. Հոսպիտալացում երկտեղանոց կամ երեքտեղանոց ընդհանուր պալատներում,
- **Սպասրկաող ծառայություններ** բուժօգնության կազմակերպման համար,
- **“+ 3 տարի հետագա բուժում”** հետագա բուժում 3 տարիների ընթացքում, այն ուռուցքաբանական հիվանդությունների դեպքում, որոնց ախտորոշումը եղել է պայմանագրի գործողության ընթացքում:

Սպասարկման ծառայություններ, որոնք իրականացվում են սպասման ժամանակահատվածում (Սպասման ժամանակահատվածում տրամադրված բժշկական ծառայությունների համար վճարում է ապահովագրված անձը)

- Շուրջօրյա բուժվահանակ 24/7
- Բժիշկ-խորհրդատուի կողմից գործընթացի ուղորդում
- Հոգեբանական օգնություն և աջակցություն
- Փաստաթղթերի հավաքագրման աջակցություն
- Եզրակացության կրկնակի ստուգում (կենսանյութերի հավաքագրում և տեղափոխում), անհրաժեշտության դեպքում կենսանյութի վիրահատական եղանակով ստացման կազմակերպում (տեղափոխումը կատարվում է ապահովագրված անձի միջոցներով)
- Տվյալ նոզոլոգիայի առաջատար բժիշկների հետ կապի հաստատում
- Ապահովագրական տարածքում մասնագիտացված բժշկական հաստատություն ընտրելու հարցում խորհրդատվություն
- Հիվանդության ախտորոշման խնդիրների հետ կապված խորհրդատվության տրամադրում,
- Բուժման կազմակերպում ապահովագրված անձի ցանկության դեպքում վերջինիս հաշվին
- - Բուժման պլանի հետ կապված խորհրդատվություն

Ծրագիրը չի պահանջում Ապահովագրված անձի նախնական բուժզննում Ապահովագրական գումար – 85,000 Եվրո

Ապահովագրության ժամկետ - 1 տարի 6 ամիս (6 ամիս սպասման ժամանակահատված՝ ապահովագրական պայմանագրի կնքման պահից)

Ապահովագրական տարածք¹ հաճախորդի ընտրությամբ Ռուսաստանի Դաշնություն կամ Ամբողջ Աշխարհ (բացառությամբ ԱՄՆ-ի)

Բացառություններ

Ապահովագրման ենթակա չեն անձինք,

- Ում տարիքը պայմանագրի կնքման պահին 18-ից պակաս է կամ 50 կամ 75-ից ավելի (պայմանագրի տարբերակներով նախատեսված տարիքային սահմանափակման համաձայն)
- Ովքեր գտնվում են ազատագրկման մեջ
- Ովքեր ունեն կամ երբևէ ունեցել են ՄԻԱՎ վարակ կամ ՁԻԱՀ
- Ում ախտորոշվել է չարորակ նորագոյացությունների, քաղցկեղի, լեյկեմիայի, լիմֆոմայի ցանկացած ձև,
- Ովքեր սպասում են ուռուցքի, քաղցկեղի կամ այլ նորագոյացությունների հետազոտությունների արդյունքներին, դրանց առկայության կասկածի կապակցությամբ,
- Ում նախքան ապահովագրության պայմանագրի ուժի մեջ մտնելը ախտորոշվել է աղիների բորբոքային հիվանդություններ (Կրոնի հիվանդություն կամ ոչ սպեցիֆիկ խոցային կոլիտ), երիկամների պոլիկստոզ, ասբեստոզ, հեպատիտի (բացառությամբ A) կամ լյարդի ցերոզի ցանկացած ձև:

Ինչպես է աշխատում ծրագիրը

Ուռուցքաբանական ախտորոշման դեպքում հաճախորդը պետք է անհապաղ, բայց ոչ ուշ, քան 90 օրվա ընթացքում 012 88 88 88 շուրջօրյա հեռախոսահամարով տեղեկացնի Ապահովագրողին ապահովագրական պատահարի մասին, տրամադրի հիվանդության մասին հայտնի ամբողջական ինֆորմացիան և անհրաժեշտ փաստաթղթերը¹, որոնք փաստում են տրված ախտորոշումը:

Ապահովագրական պայմանագրի գործողությունը կարգավորող պայմաններին ավելի մանրամասն ծանոթանալու համար կարող եք այցելել www.rgs.am կայքը:

**«Ռուսոստրախ- Արմենիա» ԱՓԲԸ,
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0001, Հյուսիսային պողոտա 1
Հեռ. +374 10 59 10 10, 50 07 70, www.rgs.am**

¹ Փաստաթղթերը պետք է լինեն ուսերեն՝ նոտարական թարգմանությամբ: